ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> մայիսի 2021թ. N ՄՈ/155-2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 340-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>>փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի մայիսի 5-ի N 125 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի <<Գագիկ Հարությունյանին <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն նշանակելու մասին>> N 340-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշմամբ հաստատված հավելվածի 4.1 կետում <<տվյալ տարվա համար օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի և վարձատրման գործակցի (3.5) արտադրյալի չափով>> բառերը փոխարինել <<410.000 (չորս հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և յուրաքանչյուր ամիս վճարովի ծառայություններից 1 տոկոսի չափով որպես բոնուսային վճար:>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 19.05.2021 12:15:14 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230